«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի
EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման
դասընթաց 2023

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Համընդհանուր ներառականության հիմնախնդիրները ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում

Հետազոտող ուսուցիչ՝ Արփինե Հովհաննիսյան
(<<Բայանդուրի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ)

ԳՅՈՒՄՐԻ 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն ---------- 3-4
2. Միջավայրի և խելամիտ հարմարեցումների դերը ներառական կրթության գործընթացում ---------- 5-7
3. Ժամանակակից հասարակության մեջ առկա կարծրատիպերի ազդեցությունը ԿԱՊԿ ունեցող երեխաների ծնեղների վրա ---------- 8- 9
4. Ուսուցիչների՝ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու պատրաստվածության ոչ բավարար մակարդակ ----------10-12
5. Եզրակացություն ---------- 13
6. Օգտագործված գրականության ցանկ ---------- 14

Ներածություն

ԿԱՊԿ ունեցող երեխաներին ներառական կրթությամբ ապահովելը ՀՀ կրթության ոլորտում դարձել է օրակարգային հարց, որի նպատակը յուրաքանչյուր երեխայի անհատական ունակությունների սահմաններում կրթության գործընթացին մասնակից դարձնելն է:Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունները ստանձնել են պարտականություններ[1],որոնցով իրականացնում են երեխայի անհատականության և նրա կարողությունների լիարժեք զարգացում:Սակայն կրթական ոլորտում առկա բացթողումները ԿԱՊԿ ունեցող երեխաների ուսումնառության ընթացքում առաջացնում են դժվարություններ:

Այս կարևոր հիմնահարցը ունի անընդհատ ուսումնասիրությունների,մանկավարժահոգեբանական վերլուծությունների, դասավանդման նոր մեթոդների,դասի ճիշտ պլանավորման և այլ ռազմավարություններ կիրառելու կարիք:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կրթական ոլորտում ԿԱՊԿ ունեցող և հատուկ հարմարեցումների կարիք ունեցող երեխաների հետ ճիշտ աշխատելու և արդյունք ունենալու համար անհրաժեշտ են մի քանի փոխկապակցված գործոններ[2]:

Սույն հետազոտությունը նպատակ է հետապնդում բացահայտել նման երեխաների կարիքային առանձնահատկություններից բխող առաջնային և երկրորդական գործոնները, որոնց բացակայության պարագայում անհնարին է դառնում երեխայի լիարժեք ներառման և սոցիալականացման գործընթացը:

Հետազոտության մեջ դիտարկվել են միջավայրի և խելամիտ հարմարեցումների, ժամանակակից հասարակության մեջ առկա կարծրատիպերի,

---

[1]Տես՝ Ներառական կրթություն. Ուսումնամեթոդական ձեռնարկ. -Երևան: 2017,էջ 17:

[2]Տես՝ Համընդհանուր ներառական կրթության ներդրման խնդիրները ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի և ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքներում, Քննարկումների արդյունքների վերլուծություն, Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, 2019, էջ 12-21:

ծնողների և ուսուցիչների շրջանում առկա խոչընդոտող գործոնները: Հետևաբար, ըստ կարևորության աստիճանի առանձնացրել ենք հետևյալ ենթակետերը.

1. Միջավայրի և խելամիտ հարմարեցումների դերը ներառական կրթության գործընթացում
2. Ժամանակակից հասարակության մեջ առկա կարծրատիպերի ազդեցությունը ԿԱՊԿ ունեցող երեխաների ծնողների վրա
3. Ուսուցիչների՝ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու պատրաստվածության ոչ բավարար մակարդակ

Նշյալ հիմնախնդիրը ուսումնասիրվել է բազմաթիվ հետազոտողների կողմից և ունի ինչպես իրարամերժ, այնպես էլ ընդհանուր մոտեցումներ: Մեր հետազոտության ընթացքում օգտվել ենք հետևյալ գրականությունից. <<Ինչպես կարգավորել երեխայի վարքը՝ չանտեսելով նրա առանձնահատկությունները>>, մեթոդական ձեռնարկ ծնողների համար, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան 2020[3], <<Համընդհանուր ներառական կրթության ներդրման խնդիրները ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի և ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքներում>>, Քննարկումների արդյունքների վերլուծություն, Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, 2019[4],<<Ներառական կրթության մշտադիտարկում>>, ուսումնասիրության զեկույցhttps://armavirdc.org/files/24-10-2019-10-55-42.pdf[5],<<Ինչպես խթանել ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում>>, մեթոդական ուղեցույց, Ձեռնարկ մանկավարժների համար, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն Երևան – 2020[6]: <<Ներառական կրթության ռազմավարություններ>> դասագիրք, Մինեապոլիս, Մինեսոթա, ԱՄՆ. Մինեսոթայի համալսարան: ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան և Խ.Աբովյանի անվան հայկական պետական

[3] Տես՝ Ինչպես կարգավորել երեխայի վարքը՝ չանտեսելով նրա առանձնահատկությունները, մեթոդական ձեռնարկ ծնողների համար, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան 2020:

[4] Տես՝ Համընդհանուր ներառականկրթության ներդրման խնդիրները ՀՀ ԳեղարքունիքիմարզիՄարտունի և ՀՀ Արմավիրի մարզիԱրմավիր համայնքներում, Քննարկումների արդյունքների վերլուծություն, Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, 2019:

[5] Տես՝ Ներառական կրթության մշտադիտարկում, ուսումնասիրության զեկույց, https://armavirdc.org/files/24-10-2019-10-55-42.pdf

[6] Տես՝ Ինչպես խթանել ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում, մեթոդական ուղեցույց, Ձեռնարկման կավարժների համար, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն Երևան – 2020:

մանկավարժական համալսարան, Երևան, Հայաստան[7]:<<Ներառական կրթություն>>, Ուսումնամեթոդական ձեռնարկ, -Երևան: 2017, 146 էջ[8]:

Միջավայրի և խելամիտ հարմարեցումների դերը ներառական կրթության գործընթացում

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2017թ.ապրիլի 13-ի N370-Ն հրամանի համաձայն ներառական կրթության գործընթացից բխող աջակցության ծառայությունները կրթական գործընթացի մասնակիցներին տրամադրում են չորս հիմնական ուղղություններով.

ա/ հարմարեցված և մատչելի միջավայրի ստեղծում,
բ/ խելամիտ հարմարեցումների տրամադրում,
գ/ կրթության մատչելիության ներառականության, որակի ու արդյունավետության բարձրացում,
դ/ սովորողի ԱՈՒՊ-ով սահմանված աջակցության ծառայությունների տրամադրում:

Դատելով վերոնշյալ դրույթներից՝ պարզ երևում է, որ ներառական կրթությունը չի կարող իրականացվել առանց միջավայրային հարմարեցումների:

Կրթության կազմակերպման համար անհրաժեշտ են հարմարեցումներ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր երեխայի համար: Ելնելով երեխայի կարիքից՝ առաջ են գալիս հարմարեցումների տարբեր տեսակի պահանջներ:

Հիմնականում լինում են ուսումնական միջավայրային և առաջընթացի գնահատման գործընթացի հարմարեցումներ:

Ուսումնական գործընթացի հարմարեցումները ավելի լայն են և պահանջում են խելամիտ մոտեցումներ:

---

[7] Տես՝ Ներառական կրթության ռազմավարություններ: Դասագիրք: Մինեապոլիս, Մինեսոթա, ԱՄՆ. Մինեսոթայի համալսարան: ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան և Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, Հայաստան, 252 էջ

[8] Տես՝ Ներառական կրթություն. Ուսումնամեթոդական ձեռնարկ. -Երևան: 2017. 146 էջ:

Քանի որ երեխաները տարբեր կարիքներով կարող են գնահատված լինել, ուստի նրանց հարմարեցումները կլինեն տարբեր:

Ժամանակի կազմակերպումը, հանձնարարություն տալու եղանակները, հանձնարարություն կատարելու եղանակները, ընթերցանությունը, գրավոր աշխատանքները պահանջում են մասնագիտական ճիշտ մոտեցումներ, որոնք կնպաստեն երեխայի կամաց-կամաց զարգացմանը: Այն պետք է լինի մատչելի:

Միջավայրային հարմարեցումները՝ տեղի, դիրքի հարմարեցում և տարածքի կազմակերպում, նպաստում են շարժողական դժվարությունների հաղթահարմանը, ուշադրության կենտրոնացմանը, տեսողական, լսողական սարքերի առկայության պարագայում նման խնդիրների որոշակի հաղթահարմանը:

Ծարժունակությունն ապահովելու սարքերը՝ անվասայլակ, քայլակ, ձեռնափայտ,անթացուպ, օրթեզ և մանր մոտորիկայի համար նախատեսված սարքերի՝ ստեղնաշար, հարմարեցված գրիչ, առկայությունները հեշտացնում են շարժողական խնդիրներով երեխաների տեղաշարժն ու գործողությունները ուսումնական միջավայրում:

Սակայն, չնայած հրամանում առկա դրույթներին և դրանից բխող պահանջների վերաբերյալ մեր ունեցած պատկերացումներին, բոլորովին այլ է իրականությունը, երբ փորձում ենք այդ պահանջները տեղայնացնել առանց այդ էլ հարմարեցված դպրոցներում: Գաղտնիք չէ, որ ՀՀ մարզերում գործող դպրոցների մեծ մասը տիպային չեն, և, որպես հարմարեցված շինություններ,ուղղակի չեն կարող բավարարել այն պահանջները, որոնք սահմանված են օրենքով: Սակայն ոչ տիպային դպրոցները տիպային դպրոցների հետ զուգընթաց իրականացնում են ներառական կրթություն: Որպես ասվածի վառ ապացույց՝ մեջբերենք փորձագիտական խմբերի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում տեղ գտած դիտարկումները: Այսպես,հիմնախնդրի շուրջ տեղի ունեցած քննարկումների մասնակիցների կարծիքով արդյունավետ ներառական կրթության ապահովման համար անհրաժեշտ է դպրոցներն ապահովել համապատասխան ֆիզիկական ենթակառուցվածքներով: Ինչպես նշում են քննարկումների մասնակիցները, դպրոցներում կամ չկան թեքահարթակներ, կամ չափանիշներին չեն համապատասխանում՝դրանով դժվարացնելով հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների ազատ տեղաշարժը: Թեքահարթակներից բացի դպրոցներում

խնդիր են նաև շենքային ընդհանուր պայմանները. երբեմն դպրոցների առաջին հարկերում դասասենյակներ չկան, կաբինետային ուսուցման դեպքում էլ երեխաները կամ չեն հաճախում դասաժամերին, կամ էլ ուսուցիչներն ու աշակերտներն իրենց ուժերով են փորձում ԿԱՊԿՈՒ երեխաներին հասցնել համապատասխան դասասենյակներ: Դպրոցները չունեն ԿԱՊԿՈՒ երեխաներին համապատասխան գույք, օրինակ՝ տեսողական խնդիրներ ունեցող երեխաների համար բրեյլյան դասագրքեր, լսողական խնդիրներ ունեցողների համար՝ լսողական սարքեր, սայլակով երեխաների համար՝ համապատասխան սեղաններ և այլն: Հարմարեցված սանհանգույցները ևս կարևոր են՝ ըստ քննարկումների մասնակիցների[9]:

Խելամիտ հարմարեցումների տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն ունեն ոչ միայն ներդպրոցական հարմարեցումները, այլև արտադպրոցական միջավայրի մատչելիությունը: Որպես ասվածի վառ ապացույց՝ կարող ենք ընդգծել գյուղական համայնքներում ինչպես ձմռան, այնպես էլ ամռան ամիսներին անանցանելի ճանապարհների խնդիրը, ինչը առավել ցայտուն կերպով է արտահայտվում սոցիալապես անապահով ընտանիքներում ապրող ԿԱՊԿՈՒ երեխաների դեպքում:

Այսպիսով, համընդհանուր ներառական կրթության պահանջներին համապատասխան կրթության ապահովման գործընթացը չի կարող լիարժեք իրականացվել, քանի դեռ չեն լուծվել վերոնշյալ խնդիրները:

[9] Տես՝Համընդհանուր ներառական կրթության ներդրման խնդիրները ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի և ՀՀ Արմավիրի մարզիԱրմավիր համայնքներում, Քննարկումների արդյունքների վերլուծություն, Մարդկայինզարգացման միջազգային կենտրոն, 2019, էջ 16:

Ժամանակակից հասարակության մեջ առկա կարծրատիպերի ազդեցությունը ԿԱՊԿ ունեցող երեխաների ծնեղների վրա

Չնայած արդի աշխարհի որոշակի առանձնահատկություններին և դրանից բխող սրընթաց զարգացումներին՝ խնդրո առարկա հարցի շրջանակներում առաջնային խոչընդոտներից մեկը ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների շրջանում առկա կարծրատիպերն են կամ դրանցից բխող մտածողության հետևանքները: Մեր ուսումնասիրություններն ու աշխատանքային փորձը ցույց են տվել, որ առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների մեծ մասի համընդհանուր ներառման գործընթացում իրենց բացասական դերակատարությունն ունեն ծնողները:

Ծնողների կողմից բացասական դերակատարության խնդիրը կարելի է բաժանել երկու մասի

- Գիտակցված կամ նախապես պլանավորված դերակատարություն
- Ոչ գիտակցված դերակատարություն

Եթե առաջին դեպքում ծնողը, ելնելով սոցիալական կամ այլ դրդապատճառներից, /գիտակցելով իր երեխայի մոտ առկա խնդիրները/ խոչընդոտում է երեխայի կրթության գործընթացը, ապա երկրորդ դեպքում, որպես խոչընդոտող հանգամանք, հանդես են գալիս հասարակության մեջ գոյություն ունեցող

կարծրատիպերը: Այս երևույթը առավել տեսանելի է գյուղական համայնքներում: Անդրադառնալով այս խնդրին՝Ն.Հ.Մարտիրոսյանն իր <<Բարենպաստ կրթական միջավայրի ապահովման մանկավարժական պայմանները ներառական կրթություն իրականացնող դպրոցներում>>հոդվածում նշում է, որ ուսուցիչների ու դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողների դրական վերաբերմունքը միայն բավարար չէ բարենպաստ միջավայր ապահովելու համար, քանի որ ԿԱՊԿՈՒ երեխայի կրթությունը իրականացվում է համադասարանցիների հետ, ուստի շատ կարևոր է նաև դասընկերների և նրանց ծնողների դրական վերաբերմունքը այդ երեխաների հանդեպ: Պակաս կարևոր չէ նաև կապկու երեխայի ծնողի վստահության հարցը: Շատ ծնողների թվում է, որ գնահատելով իրենց երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը՝ դպրոցը պիտակավորում է իրենց երեխային, ուստի շատերը հրաժարվում են թե՛ գնահատումից, թե՛ աջակցություններից[10]: Նշյալ հանգամանքով պայմանավորված օրինակները շատ են: Դրանք պայմանավորված են ոչ միայն մեծահասակների, այլև երեխաների տվյալ բնակավայրին բնորոշ ընկալումներով, ինչը ենթադրում է որոշակի բացերի լրացման նպատակով իրականացվելիք աշխատանքների կազմակերպում:

Այսպիսով, հաշվի առնելով կարծրատիպերի առկայությամբ պայմանավորված խոչընդոտների առկայությունը, անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան գործողություններ հասարակության մտածողության մեջ փոփոխություններ իրականացնելու համար:

[10]Տես՝ Ն. Հ. Մարտիրոսյան, Բարենպաստ կրթական միջավայրի ապահովման մանկավարժական պայմանները ներառական կրթություն իրականացնող դպրոցներում, https://aspu.am/website/images/files/ac32a973.pdf

Ուսուցիչների՝ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու պատրաստվածության ոչ բավարար մակարդակ

Հիմնախնդրով զբաղվողների կողմից կատարված ուսումնասիրություններում առանձնահատուկ ուշադրություն է դարձված համընդհանուր ներառական կրթության իրականացման գործընթացում ներառված ուսուցչի դերակատարությանը: Այս գործընթացում կարևորելով ուսուցչի դերը՝ փորձել ենք ընդգծել մի քանի հանգամանքներ, որոնք առանձնակի նշանակություն ունեն ԿԱՊԿՈՒ երեխայի կրթության գործում, սակայն ուսուցչի տվյալ գործընթացից բխող մասնագիտական ոչ բավարար ունակությունների պատճառով չեն իրագործվում: Շատ դեպքերում այդ դրսևորումը ուսուցիչների կողմից արդարացվում է ուսումնական գործընթացում տվյալ պահին ներգրավված ոչ ԿԱՊԿՈՒ երեխաներին որակյալ կրթության ապահովմանը խանգարելու հանգամանքով:Սակայն, իրականում ուսուցիչները, ուսուցչի օգնականները, աջակցության թիմի անդամները, կարիք ունեն ուսուցման կոնկրետ ռազմավարությունների, հնարների իմացության: Բացի այդ, վերապատրաստումների նմասնակցում են դպրոցի ոչ բոլոր ներկայացուցիչները[11]:

Այսպես՝

- Ուսումնական գործընթացին մասնակցող աշակերտների խմբում ԿԱՊԿՈՒ երեխաների առկայությունը ենթադրում է տվյալ դասի պլանավորում՝ ներառելով ԿԱՊԿՈՒ երեխաների համար նախատեսված ԱՈՒՊ-ի պահանջները
- Ներառական կրթության մասնակից բոլոր կողմերն ունեն ներառականության գաղափարի ընկալման և այդ գաղափարի

[11]Տես՝ Ներառական կրթության մեթոդիտարկում, ուսումնասիրության զեկույց, էջ 6, https://armavirdc.org/files/24-10-2019-10-55-42.pdf

ներդրման հետ կապված միջանձնային փոխհարաբերությունների բարելավման խնդիրներ[12]:

- Ուսուցչի վարպետության բացակայությունը սովորողների՝ ԿԱՊԿՈՒ երեխաների նկատմամբ ունեցած վերաբերմունքի ձևավորման նկատմամբ:
- ԿԱՊԿՈՒ երեխաների ներգրավվածությունը դասաժամերին խանգարում է մյուս երեխաներին՝ խախտելով ոչ ԿԱՊԿՈՒ դպրոցականների որակյալ կրթության իրավունքը[13]:

Հետևաբար, չենք կարող ժխտել այն հանգամանքը, որ երեխայիկրթական խնդիրը հիմնականում վերաբերում է ուսուցիչներին: Յուրաքանչյուր երեխա յուրովի վերաբերմունքի պետք է արժանանա ուսուցչի կողմից: Բոլոր աշակերտների նկատմամաբ ուսուցչի վերաբերմունքը պետք է լինի անաչառ ու բարյացակամ, պետք է նպաստի աշակերտների միջև դրական անձնային հատկանիշների ու միջանձնային որակների ինքնուրույնության, ինքնակրթության, համագործակցելու և ուրիշներին օգնելու պատրաստակամության զարգացմանը:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցիչները պետք է երեխայի մեջ տեսնեն հուսադրող ու հեռանկարային որակներ: Անհրաժեշտ է հենվել դրական հատկանիշների վրա, որպեսզի վերանան բացասական հատկանիշները:Երեխան իրեն ազատ ու անկաշկանդ է զգում ուսուցչի կողմից իր հանդեպ դրսևորած անկեղծության պայմաններում:

Ընդհանրապես ուսուցիչը պետք է ամենայն մանրամասնությամբ նախապատրաստվի դասին, որպեսզի արդյունավետ դաս ունենա:

Յուրաքանչյուր ուսուցիչ, իր պաշտոնի պարտականություններից ելնելով, գիտի,թե ինչպես պլանավորի դասը՝ նախօրոք մշակելով դաս-պլանը: Դասի պլանը առավել ծանրաբեռնված է, երբ դասարանում կա ԱՈՒՊ-ով սովորող երեխա: Նման դեպքերում ուսուցիչը պետք է շատ ճկուն լինի և կիրառի առավե լճկուն

[12]Տես՝ ՀՀ Սյունիքի մարզում ներառական կրթություն իրականացնող հանրակրթական հաստատությունների կողմից մատուցվող կրթական ծառայությունների մոնիտորինգի զեկույց, https://transparency.am/en/publication/pdf/131/1199

[13]Տես՝ Համընդհանուր ներառական կրթության ներդրման խնդիրները ՀՀ Գեղարքունիքի մարզիՄարտունի և ՀՀ Արմավիրի մարզիԱրմավիր համայնքներում, Քննարկումների արդյունքներ իվերլուծություն, Մարդկայինզարգացմանմիջազգայինկենտրոն, 2019, էջ 12:

մեթոդներ: Ուսուցիչը բոլոր աշակերտների համար անխտիր որոշում է դասավանդման ռազմավարությունը:

Որքան շատ է ուսուցիչը տարբերակված և երեխայակենտրոն դասավանդման մեթոդներ կիրառում ամբողջ դասարանի համար, այնքան ավելի հեշտ է լինում տրամաբանական կապեր ստեղծել անհատականացված ծրագրի և դասարանի համար նախատեսված ընդհանուր ծրագրի միջև: Վերջինը խթանում է դասարանում ստեղծել ուսուցման և ուսումնառության միասնական ներառական միջավայր,որտեղ ԱՈԷՊ-ով սովորող աշակերտներն իրենց դասարանի մաս են զգում,այլոչ թե մեկուսացված:

Ուսուցիչը պետք է բացահայտի այն երեխաներին,ովքեր ունեն հավելյալ միջամտության կարիք: Դա պետք է արվի առաջնային գնահատմամբ և այն երեխաների հետ,ովքեր ռիսկային գոտում են: Պետք է իրականացնի որակյալ դասավանդում,որը զգալիորեն կբարելավի աշակերտների ուսումնառության գործընթացը:Պետք է գնահատի դասավանդման արդյունավետությունը,որպեսզի համոզվի,որ այն նպաստում էաշակերտների ուսումնառությանը:

Այսպիսով, կարելի է պնդել, որ ներառական կրթության առավել արդյունավետ իրականացման նպատակով դեռևս անհրաժեշտություն կա ուսուցիչներին վերապատրաստելու, ինչը կնպաստի վերոնշյալ հիմնահարցերի լուծմանը:

Եզրակացություն

Այսպիսով, համընդհանուր ներառական կրթության պահանջներին համապատասխան կրթության ապահովման գործընթացը չի կարող լիարժեք իրականացվել, քանի դեռ չեն լուծվել ներքոնշյալ խնդիրները:

1. Անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան գործողություններ հասարակության մտածողության մեջ փոփոխություններ իրականացնելու, կարծրատիպերի առկայությամբ պայմանավորված խոչընդոտները վերացնելու ուղղությամբ:
2. Անհրաժեշտ է ներառական կրթության առավել արդյունավետ իրականացման նպատակով ուսուցիչների վերապատրաստման իրականացում:

Նշյալ խնդիրների լուծման պարագայում համընդհանուր ներառական կրթության ապահովման գործընթացը էլ ավելի արդյունավետ կիրականացվի:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ներառական կրթություն. Ուսումնամեթոդական ձեռնարկ. -Երևան: 2017:
2. Ինչպես կարգավորել երեխայի վարքը՝ չանտեսելով նրա առանձնահատկությունները, մեթոդական ձեռնարկ ծնողների համար, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան 2020:
3. Համընդհանուր ներառականկրթության ներդրման խնդիրները ՀՀ Գեղարքունիքի մարզիՄարտունի և ՀՀ Արմավիրի մարզիԱրմավիր համայնքներում, Քննարկումների արդյունքների վերլուծություն, Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, 2019:
4. Ներառական կրթության մշտադիտարկում, ուսումնասիրության զեկույց, https://armavirdc.org/files/24-10-2019-10-55-42.pdf
5. Ինչպես խթանել ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում, մեթոդական ուղեցույց, Ձեռնարկման կավարժների համար, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն Երևան – 2020:
6. Ներառական կրթության ռազմավարություններ: Դասագիրք: Մինեապոլիս, Մինեսոթա, ԱՄՆ. Մինեսոթայի համալսարան: ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան և Խ.Աբովյանի անվան հայկական պետական Մանկավարժական համալսարան, Երևան, Հայաստան:
7. Ն. Հ. Մարտիրոսյան, Բարենպաստ կրթական միջավայրի ապահովման մանկավարժական պայմանները ներառական կրթություն իրականացնող դպրոցներում, https://aspu.am/website/images/files/ac32a973.pdf
8. ՀՀ Սյունիքի մարզում ներառական կրթություն իրականացնող հանրակրթական հաստատությունների կողմից մատուցվող կրթական ծառայությունների մոնիտորինգի զեկույց, https://transparency.am/en/publication/pdf/131/1199